Վերապատուելեացդ Հայր Յակոբ վարդապետի
և Հայր Անդրեաս վարդապետի

Ցամի տեառն 1749 Մայիսի 23

Ցիսուսաւանդ ողջունիւ յայտ լիցի Հայրութեան ձերում, զի պատճառն վասն որոյ այսքան ժամանակ գիր ոչ եղև յղեցեալ առ ձեզ, այս է, զի Գերյարգելի աբբայ հօր մերում անցեալ ամի դեղնացաւութիւնն որ փարատեցեալ էր, դարձեալ եկն ի վերայ, զորոյ գիարդն ոչ կարեմք այժմ մի ըստ միոջէ պատմել ձեզ։ Եւ թէպէտ մեր քաջ իմաստուն բժիշկն բազում ջանիւք պէսպէս դեղ արար, և երբեմն երբեմն ցաւն թեթևացաւ, բայց վերջապէս փառք բարերար կամացն աստուծոյ, յապրիլի 27 փոխեցաւ յայտի կենաց։ Եւ եղև մեզ անպատմելի ցաւ որք մնալն մեր յայնպիսի գերազանց շնորհալի բարերար խնամակալ հոգևոր հօրէ և առաջնորդէ, որ և էր փառքն ընդհանուր ազգիս մերոյ։ Եւ յոյժ բարւոք պատրաստութեամբ և ջերմեռանդութեամբ եղև փոխիլն նորա յայտի կենաց։ Ընկալաւ յառաջագոյն զամենասուրբ Հաղորդութիւն և զվերջին Օծումն. և ետ մեզ զվերջին օրհնութիւնն և զպատուէրն։ Եւ գրեթէ մինչև ի յետին շնչելն էր զգաստ։ Յետ այսորիկ արարաք նմա զարժանի մեծահանդէս թաղումն արտասուօք և ջերմեռանդութեամբ. և զութ օր այգողք արարաք նմա։ Ցկնի թաղման իբրև փոքր ինչ սփոփեցան սիրտք մեր, յետ քանի մի աւուրց ժողով արարաք զոմն ի մէնջ կացուցանել մեզ փոխանորդ աբբայի, զի կառավարեսցէ զմիաբանութիւնն մեր ժամանակաւորապէս՝ մինչև ընտրեսցի և կացուսցի ոմն աբբայ հայր։ Եւ ըստ սրբոյ Կրօնիս մերոյ կանոնի և կացութեան՝ նաև ըստ աբբայ Հօրն մերոյ Խրատու՝ պալա ձգելով՝ ընտրեաց և ընդունեցաւ միաբանութիւնն զիս լինիլ փոխանորդ աբբայի. և այսպէս յիմ վերայ եդաւ կառավարութիւնն հասարակութեան մերոյ մինչև զնոր աբբայ դիցուք։ Արդ որպէս ի ժամանակս կենդանութեան աբբայ հօրն ամենայն ինչ կազմ և կարգաւորեալ կայր, նոյնպէս և այժմ։ Իսկ զաբբայ ընտրել և կացուցանել այժմ ոչ կարեմք, քանզի պիտոյ է, զի որք արտաքոյ վանիցս են, եկեսցեն՝ եթէ կարասցեն, իսկ որք ոչ կարեն գալ, զհաւանութիւն իւրեանց գրեսցեն առ մեզ։ Եւ քանզի ձեր մնալն այդր՝ յոյժ հարկաւոր է, վասն որոյ պիտոյ է զի դուք գրիցէք զհաւանութիւն ձեր՝ այսու օրինակաւ. Ես հայր այս անուն հաւանիմ և ընդունիմ զնա զոլ աբբայ հայր, զոր երկու երրորդ մասն ժողովոյ միաբանութեան մերոյ ընտրեսցէ։ Դարձեալ վասն հոգւոյ աբբայ հօրն զհինգ հինգ պատարագս մատուսջիք։... Վասն դադարման ներողութեանց ի սուրբ տարւոջն՝ ծանիք զի իրաւի յամենայն աշխարհ որքան ներողութիւնք կան, դադարին ի սուրբ տարւոջն, ուստի զգոյշ լերուք, զի մի յայնմ տարւոջ ևս հոչակիցէք զներողութիւնս խորանաց ձերոց...։ Ցարևելս ի Հայաստան է սաստիկ խռովութիւն և դժնդակ դառնութիւն, մինչ զի եթէ հնար էր, ամենեքեան փախչէին յայնմ երկրէ, զի այժմ երեք Շահ նստեալ են ի զանազան տեղիս և պատերազմին։

Ն. Ծ. Հ. Եղիա վարդապետ Փոխանորդ

[Վենետիկ – Ս. Ղազար]

ՃԽԵ.

Հ. Ղազար կը նկարագրէ վերոյիշեալ տխուր գուժէն իր և քաղաքին կրած մեծ տպաւորութիւնը։

Վերապատուեցեալ և Յարգեցեալ Հայր Եղիայ վարդապետի
Փոխանորդի Աբբայի և Հօրն իմոյ

... Եհաս գիր մի կարի անագան, զոր գրեալ էիր Հայր Մարկոսին. և ի գրոյն յայնմանէ իմացայ զլուր ինչ ցաւալի, զի ի յապրիլի 27 խաւարեալ է մեր հայ ազգին արե-